

13919



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
«24» 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 291 - 24

Նախաձեռնող՝

«Սագայրի ֆիշ» ՍՊԸ
Մասիս համայնք, Սիփանիկ բնակավայր

Գործունեությունը՝

Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում
գործող ձկնաբուծարանի արտադրական
հզորությունների ընդլայնում
Արարարի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 291 - 24

«24» դեկտեմբերի 2024թ.

**Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի փարածքում գործող
ձկնաբուծարանի արտադրական հզորությունների ընդլայնման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	«Սագատի ֆիշ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիփանիկ բնակավայր

Ներածական մաս. «Սագատի ֆիշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում իրականացնել գոյություն ունեցող ձկնաբուծարանի արտադրական հզորությունների ընդլայնում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-110-Ն/ 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 4-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ: Համաձայն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները: Այսպիսով՝ փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան:

Նկարագրական մաս. Համաձայն հայտի ձկնաբուծարանը գտնվում է Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի 20-րդ փողոցի 1-ին նրբանցք 3 հասցեում:

Ընկերությունը նախատեսում է մեծացնել արտադրական ծավալները՝ համապատասխանեցնելով 2023թ. մայիսի 4-ին տրամադրված N0113-23 1-2-Ջ/Կ-Ս-Ե/Վ Ջրօգտագործման թույլտվության պայմաններին:

Գործունեության տարածքի հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից կազմում է 23կմ: Բնակավայրը գտնվում է Արարատյան դաշտում, Հրազդան գետի ձախափնյա հովտում, ծովի մակարդակից 828 մ բարձրության վրա:

Տարածքի երկրաբանական կառուցվածքն առկա է համապատասխան գնահատման և միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի միջոցով: Տարածքի երկրաբանական կառուցվածքն առկա է համապատասխան գնահատման և միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի միջոցով: Տարածքի երկրաբանական կառուցվածքն առկա է համապատասխան գնահատման և միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի միջոցով:



Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ - 10°C), տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է:

Գործունեության տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Անմիջապես ձկնաբուծարանի տարածքում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չկան:

Համաձայն հայտի ընկերությունը գործունեությունը սկսել է 2012թ-ից, տարեկան՝ 50 տ արտադրողականությամբ, ժամանակի ընթացքում, օպտիմալացնելով գործընթացները, ապահովել է առավելագույն արտադրանք միավոր ջրաքանակի հաշվարկով, համաձայն ՀՀ լառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N703-Ն որոշման, ապահովելով 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ նվազագույնը 700 կգ արտադրողականություն: Ընկերությունը պարբերաբար իրականացնում է տեխնիկական վերազինում, որի նպատակն արտադրական ծավալների ավելացումն է և ձկան կենսապայմանների և որակական հատկանիշների բարելավումը: 2023թ-ին ընկերության կողմից տեղադրվել է ջրի շրջանառու համակարգ, որը իրականացվում է չորս պոմպերի միջոցով /յուրաքանչյուրը 250լ/վ ջրաթողունակությամբ/: Նշված համակարգի ներդրումն ապահովել է ջրում թթվածնի ծավալի էական ավելացում, ջրավազաններում անհրաժեշտ ջրահոսքերի ապահովում, ինչպես նաև ավազաններից ոչ պիտանի նյութերի արդյունավետ հեռացում: Ներկայումս ընկերության արտադրողականությունը կազմում է 650 տ կախված պահանջարկից:

Ընկերությանը սեփականության իրավուքով պատկանող՝ 3.66 հա տարածքում առկա է.

- ձկնաճեցման լճակ՝ 13329.36 քմ, 68 հատ,
- պահեստ՝ 120.33 քմ,
- ենթակայան՝ 17.39 քմ,

Վարձակալական հիմունքներով հողատարածքում (0.5 հա մակերեսով) առկա են՝

- ձկնաճեցման լճեր՝ 1262.7 քմ,
- վարչական շենք՝ 1314.15 քմ:

Համաձայն հայտի տարածքը կառուցապատված է և նոր կառուցապատման աշխատանքներ չեն նախատեսվում: Ձկնաբուծարանի մոտակայքում բնակելի տներ և շինություններ չկան:

Ընկերությունը փակ շինության մեջ վարում է մանրածկան տնտեսություն, որտեղ իրականացնում է կենսական ցիկլերի ամբողջական ապահովում՝ մայրական վտառի կազմավորումը, շարունակական ապահովումը, զարգացումը, սելեկցիան, ինկուբացիան, թրթուրի և մանրածկան աճեցումը, կենսունակ մանրածկան տեղափոխումը լճակներ:

Ընկերությունում մանրածկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Իշխան ձկան հաշվարկով մեկ ձկան համար մինչև 1 կգ աճեցնելու համար պահանջվում է 1.8 կգ կեր: Անհրաժեշտ կերը մատակարարվում է Եղվարդի կերերի գործարանից և պահեստավորվում պահեստային տնտեսությունում, որտեղից չափաբաժիններով տրվում է լճակներ: Լճակների վրա տեղադրված են աէռատորներ՝ ջուրն անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար:

Ընկերության ջրօգտագործումն իրականացվում է 04.05.2023թ. N0113-23 1-2-Ջ/Կ-Ս-Ե/Վ Ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ 5 գործող խորքային հորերից, 77765.0 խմ/օր /կամ 900.0 լ/րկ ծախսով/: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգի միջոցով: Հրազդան գետ՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պայմաններին համապատասխան ապահովելով կեղտաջրերում վնասակար



նյութերի թույլատրելի քանակները, թափվելով Հրազդան գետ խառնման արդյունքում տեղի է ունենում ջրում պարունակվող օրգանական միացությունների նստացում:

Ընկերության կողմից ջրաքանակի ավելացում չի նախատեսվում, ապահովվելու են ջրօգտագործման և ձկնարտադրության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարեկան ծավալների չափաքանակներն: Ձեռնարկության ջրառի և ջրահեռացման կոորդինատական կետերն են՝

Ջրառ		Ջրահեռացում	
X=44° 20' 35.1	y=40° 04' 04.5	X=44° 20' 34.5	y=40° 04' 04.7
X=44° 20' 45.6	y=40° 04' 03.6		
X=44° 20' 41.6	y=40° 04' 04.8		
X=44° 20' 45.7	y=40° 04' 08.3		
X=44° 20' 40.8	y=40° 04' 08.7		

Ընկերությունն ունի ոլորտը կարգավորող լիազոր մարմնի կողմից համաձայնեցված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ: Ջրօգտագործման թույլտվությամբ՝ կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի №30 նորմերով սահմանվել են կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմերը: Ընկերությունը հանդիսանում է «ՀԷՑ» բաժանորդ, էլեկտրամատակարարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով: Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում:

Գործունեության արդյունքում առաջացող թափոնների կառավարումն իրականացվելու է ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Ձկնային տնտեսությունում առաջացող թափոնատեսակներն են.

- կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ, տարեկան մոտ 1.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր,

- սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք՝ մոտավոր 100 կգ/տարեկան քանակով,

«Կենդանիների մարմնի և ներքին օրգանների մասեր» թափոն՝ մոտավոր 2 տոննա տարեկան քանակով:

Անկաձ ձկների արդյունքում առաջացած թափոնի վերաբերյալ, ընկերությունը գործունեության ընթացքում դիմում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին, կատարվում է նմուշառում, որից հետո համաձայն ցուցումի հանձնվում է համապատասխան թափոնների վերամշակման լիցենզիա ունեցող կազմակերպությանը:

Համաձայն Հայտի՝ տնտեսությունում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է հետագայում ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ:

Նախնական գնահատման հայտով ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- ջրի որակի մշտադիտարկում ջրառի կետում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում ջրավազանում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում ջրահեռացման կետում եռամսյակը մեկ անգամ,
- ջրի որակի մշտադիտարկում Հրազդան գետ թափման կետում հոսքն ի վար 100մ եռամսյակը մեկ անգամ:



Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 750000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննությունն իրականացվել է օրենքով սահմանված կարգով: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի և առողջապահության նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հայտի լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Համաձայն Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանելու մասին» N 2207-Ն որոշման՝ «Սագատի ֆիշ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող ինքնաշատրվանող խորքային հորերի խողովակաշարերի վրա տեղադրված են ուլտրաձայնային ծախսաչափեր և միացված են հարթակին:

Համաձայն Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանելու մասին» N 2207-Ն որոշման՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը ջրառի բոլոր կետերում անհրաժեշտ էր տեղադրել ուլտրաձայնային ծախսաչափեր, ինչպես նաև Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2305-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ ջրային ռեսուրսների ջրային հաշվեկշռի անհավասարակշռության վերականգնման և պահպանման նպատակով Ընկերությունը պետք է ներդնի փակ շրջանառու համակարգ:

Ջրային օրենսգրքի 37.3 հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով ամրագրվել է պահանջ՝ «հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում գործունեությունն իրականացնել փակ շրջանառու համակարգով», ինչի ներդրման ժամկետ է սահմանվել 2024 թվականի հունվարի 1-ը և համաձայն 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2305-Ն Կառավարության որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի մարտի 1-ը ջրօգտագործողը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին է ներկայացնում փակ շրջանառու համակարգի տեղադրման և շահագործման վերաբերյալ տեղեկատվություն:

Համաձայն թիվ ՎԴ/5106/05/24 վարչական գործի վերաբերյալ Վարչական դատարանի 2024 թվականի մայիսի 16-ի որոշման՝ կասեցվել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանելու մասին» N 2305-Ն որոշումը մինչև սույն գործի դատարանական ավարտը:



Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական թիվ ՎԴ/5106/05/24 վարչական ակտով, համաձայն որի 2024 թվականի մայիսի 16-ի որոշմամբ կասեցվել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանելու մասին» N 2305-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ մինչև գործի դատաքննության ավարտը:

- Ջրային օրենսգրքով սահմանված դեպքերում՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի գրավոր ծանուցման հիման վրա ջրօգտագործման թույլտվությունն օրենսգրքով սահմանված ժամկետում ներկայացնել վերանայման:

- Ձկնաբուծարանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հայտում ամրագրված բնապահպանական կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Սագատի Ֆիշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում գործող ձկնաբուծարանի արտադրական հզորությունների ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան

